ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- փետրվարի 2026 թվականի №---Ա

«ՔՈՆԹՈՒՐ ԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի հունիսի 20-ի №232-Ա որոշմամբ տվել է համաձայնություն «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գույքի գրավադրման գործարքի կնքմանը, իսկ Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 20-ի №292-Ա որոշմամբ՝ Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող և հետագայում թողարկվելիք բաժնետոմսերի գրավադրման գործարքի (այսուհետ միասին՝ Գործարքներ) կնքմանը:

Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի համաձայն՝ **լիցենզավորված անձը գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով է ներկայացնում գործարքի կնքումը հավաստող՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթի (այդ թվում՝ պայմանագիր, արձանագրություն և այլն) պատճենը:**

Ընկերությունը Գործարքները կնքել է համապատասխանաբար՝ **2025 թվականի հուլիսի 23-ին և օգոստոսի 22-ին, դրանց պատճենները, սակայն, Հանձնաժողով է**

ներկայացրել նույն թվականի օգոստոսի 20-ին (գրություն №6960-2025) **և հոկտեմբերի 2-ին** (գրություն №8129-2025):

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, Ընկերության նկատմամբ Կարգի 26-րդ կետով սահմանված դրույթի հնարավոր խախտումների փաստերի ուսումնասիրության նպատակով հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2026 թվականի հունվարի 12-ի №ՄՄ/34.1-Մ2-2/116-2026 գրությամբ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակում 2026 թվականի հունվարի 30-ի №912-2026 գրությամբ Ընկերությունը խնդրել է կարճել վարչական վարույթը՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որ սույն գործով վարչական իրավախախտումները Հանձնաժողովի կողմից հայտնաբերվել են և վարչական վարույթը հարուցվել է 2026 թվականի հունվարի 23-ին, սակայն Ընկերությունը 2025 թվականի օգոստոսի 20-ին և հոկտեմբերի 2-ին բովանդակային առումով արդեն իսկ կատարել էր իր պարտականությունները: Միաժամանակ, նշվել է, որ պարտականությունների ուշ կատարման արդյունքում չեն առաջացել հետևանքներ պետության կամ անհատների համար, ուստի դրանք վարչական իրավախախտում դիտարկելը և Ընկերության նկատմամբ պատասխանատվություն կիրառելը կհամարվի ձևական պահանջների չարաշահման սկզբունքի խախտում:

Հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել և Ընկերության կողմից ոչ միայն չի վիճարկվել, այլ նաև ընդունվել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ Ընկերությունը երկու դեպքում էլ խախտել է Կարգի 26-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ վերջինս Գործարքների կնքումը հավաստող՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը ներկայացրել է Կարգով սահմանված երկշաբաթյա ժամկետի խախտմամբ: Ուստի, առկա են «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խախտումներ, որոնցից յուրաքանչյուրն առանձին-առանձին առաջացնում է նախազգուշացում՝ հաշվի առնելով խախտման կրկնակիության բացակայության և օրենքով նախատեսված այլ հետևանքներ առաջացրած չլինելու հանգամանքները:

Այսպես, «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից,** բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, **կարգավորող**

հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի այլ մասերով վարչական իրավախախտման հատկանիշներ, առաջացնում է նախազգուշացում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանն, առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Վերոգրյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է լիցենզավորված անձի կողմից ոչ իրավաչափ վարքագծի, այն է՝ Հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտով սահմանված պահանջի խախտման դրսևորման երեք, իսկ պատասխանատվության միջոցի՝ երկու տարբերակ.

1. **Հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտով սահմանված պահանջի խախտում, որը չի հանգեցրել**

կամ չէր կարող հանգեցնել որևէ հետևանքի. այս դեպքում իրավախախտումն առաջացնում է նախազգուշացում.

2. Հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտով սահմանված պահանջի խախտում, որը չի հանգեցրել կամ չէր կարող հանգեցնել որևէ հետևանքի, սակայն տեղի է ունեցել նույն արարքի համար վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում. այս դեպքում իրավախախտումն առաջացնում է կա՛մ տուգանք, կա՛մ լիցենզիայի գործողության կասեցում, կա՛մ լիցենզիայի գործողության դադարեցում.

3. Հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված նորմատիվ կամ անհատական իրավական ակտով սահմանված պահանջի խախտում, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել որոշակի հետևանքների. այս դեպքում իրավախախտումը կրկին առաջացնում է կա՛մ տուգանք, կա՛մ լիցենզիայի գործողության կասեցում, կա՛մ լիցենզիայի գործողության դադարեցում:

Առաջին տարբերակը, ըստ էության, օրենսդիրը գնահատել է որպես նվազ վտանգավորություն ունեցող և որպես **իմպերատիվ պատասխանատվության տեսակ նախատեսել է «նախազգուշացում»-ը,** բացառությամբ նույն արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքի.

Երկրորդ և երրորդ տարբերակները, ըստ էության, օրենսդրի կողմից գնահատվել են որպես ոչ նվազ վտանգավորություն ունեցող և Հանձնաժողովի համար սահմանվել է հայեցողական լիազորություն, որի կիրառումը ենթադրում է կա՛մ տուգանք, կա՛մ լիցենզիայի գործողության կասեցում կա՛մ լիցենզիայի գործողության դադարեցում:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթ կարող է չհարուցել, իսկ հարուցված վարչական վարույթը կարճել, եթե՝ մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին հանձնաժողովի որոշման ընդունումը կարգավորվող անձը վերացրել է թույլ տված խախտումը, և եթե դրա հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարման կամ ոչ

պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն: Սույն կետի իմաստով՝ խախտման կատարման կրկնակիություն է համարվում այդ խախտումը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

Վերոգրյալ նորմի բովանդակությունից հետևում է, որ օրենքով նախատեսված հետևանքներ չառաջանալու և խախտման կրկնակիության բացակայության դեպքում Հանձնաժողովն ունի հայեցողական լիազորություն՝ կարճելու վարչական վարույթը, եթե մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին հանձնաժողովի որոշման ընդունումը կարգավորվող անձը վերացրել է թույլ տված խախտումը:

Սույն գործի շրջանակներում՝ Ընկերությունը երկու առանձին դեպքերում էլ խախտել է Կարգի 26-րդ կետով նախատեսված՝ գործարքի կնքումը հավաստող փաստաթուղթը կոնկրետ ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու պայմանը:

Նման պայմաններում, հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության կողմից թույլ է տրվել միաժամանակ երկու առանձին խախտում, անկախ **լիցենզավորված անձի կողմից գործարքների կնքումից հետո երկշաբաթյա ժամկետի խախտմամբ գործարքների կնքումը հավաստող՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի պատճենները Հանձնաժողով ներկայացնելու հանգամանքից,** Հանձնաժողովը գտնում է, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ վարչական վարույթը կարճելու հայեցողական լիազորությունը կիրառելի չէ:

Անդրադառնալով Ընկերության այն պնդմանը, որ Հանձնաժողովի իրավական ակտի պահանջի՝ պետության կամ անհատների համար հետևանքներ չառաջացրած խախտումը վարչական իրավախախտում դիտարկելը և Ընկերության նկատմամբ պատասխանատվություն կիրառելը կհամարվի ձևական պահանջների չարաշահման սկզբունքի խախտում, Հանձնաժողովը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ, Հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտով սահմանված պահանջի խախտումը իրավախախտում

դիտարկում է ոչ թե Հանձնաժողովը, այլ օրենսդիրը՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածում հստակ ամրագրելով անհրաժեշտ իրավակարգավորումներ, որպիսի պայմաններում Հանձնաժողովը զրկված է արարքն իր հայեցողությամբ իրավախախտում դիտարկելու կամ չդիտարկելու հնարավորությունից: Ավելին՝ ըստ էության այդ մասով Ընկերության փաստարկներն ուղղված են «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի իրավակարգավորումների վիճարկմանը, որոնց իրավաչափության գնահատումը դուրս է Հանձնաժողովի իրավասություններից:

Միաժամանակ, հարկ է փաստել, որ Ընկերության համար սահմանված պահանջները բխում են օրենսդրությունից, ուղղակիորեն սահմանված են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով, ուստի սույն դեպքում առկա չէ որևէ ձևական պահանջ: Ավելին՝ թիվ ՎԴ/3558/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը 2024 թվականի փետրվարի 1-ին կայացրած որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*... ձևական պահանջները չարաշահելու արգելքը կոչված է ուղղորդել վարչական մարմիններին, որպեսզի նրանք օրենքները կիրառեն արդարացի և մարդասիրական եղանակով՝ թույլ չտալով դրանց տառի խիստ պահպանում՝ ի վնաս բովանդակության կամ ի վնաս մասնավոր անձանց շահերի: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ որոշակի պահանջներ ուղղակիորեն սահմանված են օրենքներով:*

*Այսպես, անդրադարձ կատարելով **«ձևական պահանջներ»** հասկացությանը, Վճռաբեկ դատարանը նշում է, որ ձևական պահանջները ոչ թե ընդհանրապես անտեսվում են, այլ դրանցով արգելվում է առաջնորդվել այն դեպքում, երբ անձինք բովանդակային չափանիշներով իրենց պարտականությունները կատարած են լինում: Այլ կերպ՝ ձևական պահանջները պարտադիր են այն չափով և այն դեպքերում, որ չափով և երբ դրանք հնարավորություն են տալիս արձանագրելու պարտականությունների՝ բովանդակային իմաստով կատարման փաստը: Ինչ վերաբերում է **«ձևական պահանջ»** հասկացության բովանդակությանը, ապա վերջինիս շրջանակները հստակ պատկերացնելու համար **Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ հարկ է համարում փաստել, որ ոչ մի պարագայում ձևական չեն կարող համարվել այն պահանջները, որոնք միանշանակ ներկայացվում են օրենսդրությամբ:** Ուստի Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքի նպատակն է խուսափել ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից) և ձևական պահանջների*

պահպանման նպատակով անձանց չծանրաբեռնել պարտականություններով կամ չմերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են։»:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Կարգի 26-րդ կետի խախտումների համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2026թ.